

**ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ԿԱՌՈՅՑՑՆԵՐԻ
ՅՈՐԻՄՈՒԱԾՔԱՅԻՆ ՆԱԽԱՏԻՊԵՐԻ ԵՒ ՏԻՊԵՐԻ
ԾԱԳՄԱՆ ԵՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԸՍՏ
ՎԵՆԵՏԻԿԻ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՆԵՐԻ
ՈՒՄՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ**

Յօդուածում աշխարհաճանաչման խորհրդաբանական ընկա-
լումների տեսանկիւնից վերահաստատում է Հայր Գաբրիէլ Վ.
Նահապետեանի տեսակէտը, առ այն, որ Հայկական միջնադարեան
պաշտամունքային կառոյցի գմբէթը իր թմբուկ վեղարով, զուտ
հայկական երեւոյթ է: Կարեւորում է նաև Ս. Ղազարի Մխիթա-
րեան միաբանների գերը հայոց պատմութեան, հայի ինքնութեան,
մշակոյթի եւ մասնաւորապէս ճարտարապետութեան ուսումնասի-
րութեան գործում:

Միտք երբեք յօժար չէ հրաժարուել
իմանալ այն, ինչ որ կարող է
իմանալ իր նախնիների եւ հին
հայերի գիտեցածից:¹

Հայկական միջնադարեան պաշտամունքային կառոյցի (եկե-
ղեցի, տաճար, մատուռ եւ այլն) ճարտարապետութիւնը ստեղ-
ծուել է քրիստոնէական հաւատքի կողմից ընդունելի եւ դրանով
պայմանաւորուած որոշակի պայմանների արդիւնքում: Հստ Հայր
Ղեւոնդ Ալիշանի «... այնպէս, ինչպէս կառոյցն է դիտում հիմքի
վրայ հաստատուած, կրօնը հիմքն է, հաւատքը՝ կառոյցը»²: Հստ
այդմ հայկական քրիստոնէական պաշտամունքային կառոյցը՝ եկե-

1 ԱԼԻՇԱՆ Հ. Դ., Հայոց հիմ հաւատքը կամ հեթանոսական կրօնը, Երևան
2002, 9:

2 Անդ, 11:


ղեցին (Աստծոյ Երկրային տունը) իր միասրահ, եռասրահ, կենտրոնագմբէթ եւ այլ տարատեսակներով, ունի մի շարք, բոլոր տիպ-տեսակների համար պարտադիր յօրինուածքային բաղադրամասեր: Դրանց շարքում հիմնականներն են՝ եկեղեցու (տաճարի) աւագ խորանի դէպի արեւելք կողմնորոշումը, չորս սիւների վրայ յենուած գմբէթը իր թմբուկ վեղարով, «հայկական» խորչերը, հարթաքանդակային եւ զարդանախաչային յաւելումները, ինչպէս կառոյցի ներքին, այնպէս էլ արտաքին յարդարանքում եւ այլն:

Պաշտամունքային կառոյցների յարդարանքում եւ ընդհանուր յօրինուածքում յաճախ հանդիպող բուսական (խաղողի, նըռան), կենդանական (արծուի, ցուլի, առիւծի), երկրաչափական (յաւերժութեան նշանի, կեռխաչի, խաչի, շրջանակի, քառանկեան, եռանկեան) եւ այլ պատկերները խորին խորհուրդներ ունեն:

Այս պատկերները յատուկ եւ բնորոշ են ոչ միայն հայ քրիստոնէական, այլ նաև մինչքրիստոնէական, հեթանոսական մշակոյթին³:

Հ. Ղեւոնդ Ալիշան (նկ. 1) մեկնաբաննելով բնապաշտութեան մասին մեր նախնիների պատկերացումները, առանձնացնելով լեռների եւ քարերի, կրակի, ջրի, օղեղէն նիւթերի եւ երեւոյթների, բուսեղէնների եւ ծառապաշտութեան վերաբերեալ մեր նախահայրերի գիտելիքները, դրանց աւելացնելով արեգակի, լոյսի, աստղերի, եղանակի, կենդանիների, չաստուածների, հանդերձեալ կեանքի եւ այնի հնագոյն մեկնութիւնները, փաստօրէն ներկայացնում է կեանքի, հաւատքի, դաւանանքի հնագոյն ձեւերն ու տեսակները, բնոյթն ու էութիւնը: Տրամաբանական է, որ դրանք իրենց ազդեցութիւնն ու թելադրանքը պիտի ունենային մինչքրիստոնէական հայկական ճարտարապետութեան եւ յատկապէս պաշտամունքային կառոյցի վրայ: Ալիշանը չի ներկայացնում հնագոյն հաւատքի եւ կրօնի բազմազան տարրերի երկարչափական պատկերները: Սակայն դրանք տեսանելի են հայկական լեռնաշխարհի հնագոյն մշակութային ամենատարբեր շերտերում (ժայռապատկերներ, ինցեղէն, կիրառական արուեստի գործեր, ճարտարապետական կառոյցներ եւ այլն):

3 ԳՐԻԳՈՐԵԱՆ Ա., (ԱՇԽԱՏԱԿԱՆ ՀԱՅԿԱՆՁՈՒԻՆ), Խորհրդաթշամային մտածողութիւնը հայ ճարտարապետութիւնում, Երևան 2005, 106 աղիւսակը:




Նկար 1.

ԱԼԻՇԱՆ Հ. Դ., Հիմ հաւատք կամ
հերանոսական լրում հայոց, Ս. Ղազար,
Վենետիկ 1895:


Նկար 2.

ՆԱՀԱՊԵՏԵԱՆ, Հ. Գ., Քրիսոնեէայամ
նարտարապետութին, Ո՞ւր է
կեղրոնակամ գմբերաւոր
նարտարապետութեամ խանձարութին,
հետազոտութիւններ, Ս. Ղազար,
Վենետիկ 1930:


Եթէ Ալիշան Հայոց հին հաւատքի եւ կրօնի մասին, Հայոց
մշակոյթի, աշխարհագրութեան, կենցաղի, պաշտամունքային կա-
ռոյցների տեղադրութեան եւ նշանակութեան, ընդհանրապէս Հայի
տեսակի, նրա պատմութեան եւ էութեան եւ տասնեակ այլ շատ
կարեւոր հարցերի վերաբերեալ հետազոտութիւններ, ուսումնասի-
րութիւններ եւ գատողութիւններ է տրամադրում մեզ, դրանով
իսկ հիմք ստեղծելով յետագայ հիմնարար հետազոտութիւնների
համար, ապա մէկ այլ Միիթարեան միաբան Հայր Գաբրիէլ Նա-
հապէտեանը (նկ. 2) աւելի առաջ գնալով, խորանում է հայկական
քրիստոնէական պաշտամունքային կառոյցների ձեւագոյացման
գաղտնիքների մէջ, փորձելով վեր հանել վերլուծել եւ բացայա-
տել դրանք:




Գծ 1. Շրջանակ, գլան, աշխարհի չորս կողմերն ուղղուած լուսամուտներ




Գծ 2. Քառակուսի, քառանիստ, աշխարհի չորս կողմերն ուղղուած լուսամուտներ




Գծ 3. Բազմանիստ, ութանիստ, աշխարհի կողմերն ուղղուած լուսամուտներ (կամ 4, 8 լուսամուտներով տարբերակներ)



Գծ 4. Բազմանիստ, 12 նիստաւոր, աշխարհի կողմերն ուղղուած 4 կամ 12 լուսամուտներով



Գծ 5. Բազմանիստ, 16 նիստաւոր, աշխարհի կողմերն ուղղուած 4, 8 կամ 16 լուսամուտներով



Գծ 6. Շրջանակ, գլան, 4 լուսամուտներով և հովհարածել 32 նիստ ունեցող վեղարով տարբերակ

Նկար 3.

Հայկական միջնադարեան պաշտամունքային կառոյցների գմբէքների (քմբուկների և վեղարների) տարբերակները, ըստ կտրուածքների:

Իր ուսումնասիրութեան մէջ նա փորձում է յաջորդական կապ գտնել հայկական մինչքրիստոնէական եւ քրիստոնէական մշակոյթների միջեւ: Նա համոզուած լինելով, որ Ե.-Զ. դարերը հայ ճարտարապետութեան համար «կատարելագործման» եւ «կայացման» շրջան են եղել, այնուամենայնիւ յետադարձ հայեացք է նետում դէպի մեր մշակութային անցիալը՝ «Սակայն ի նկատի առնելով, որ Է. դարու մէջ կանգնուած եկեղեցիներն՝ կատարեալ ոնով եւ ձևով կը ներկայանան մեզի, կը խորհինեմ եւ հարց կու տանի մենի մեզի, արդեօֆ նախնական շինարարական աւանդութեան մը կամ քարագործերու արուեստագործական յաջորդութիւն մը եղած եւ պահուած չէ՝ Հայստանի մէջ, եւ թէ հեթանոսական մեհենաներն՝ արդեօֆ գմբէքաւոր ոնով կառուցուած չէի՞ն գլխաւոր մեհենատեղիներու վրայ»⁴: Սակայն նրա նպատակը ոչ այնքան մինչքրիստոնէական պաշտամունքային կառոյցի ուսումնասիրումն է, որքան միջնադարեան հայկական եկեղեցու գմբէթի տիպաբանական հիմքերի բացայացումը: Հստ նրա «Հայ միտքը ամէն ջանի եւ նիգ թափեց անշատելու գմբէքը հեթանոսական որմերէն եւ դնել չորս աւետարանական սիւներու վրայ ...»⁵:


Այսպէս, գմբէթը ինքնատիպ յօրինուածքային տիպի նշանակութիւն է ձեռք բերում, առանց որի անհնար է դառնում պատկերացնել հայկական միջնադարեան պաշտամունքային կառոյցը:

Այն փաստօրէն սրահի (միասրահ, եռասրահ եւ այլն) հիմնական ծաւալի կենտրոնական հատուածից վեր է խոյանում դէպի երկինք: Գմբէթները աւանդաբար բաղկացած լինելով երկու մասից (թմբուկ եւ վեղար) իրարից տարբերում են թէ նկարուածքով, թէ ծաւալային լուծումներով եւ թէ զարդարանքով:


Գմբէթների հիմնական տեսակներն են. ա. Հստ թմբուկների՝ գլանաձեւ եւ նիստաւոր: Թմբուկները իրենց հերթին բաժանում են 4, 6, 8, 10, 12, 16, 20, 32 նիստերից բաղկացած ենթատեսակներից (նկ. 3) (Խորակերտի յօրինուածքում վեղարը յենուում է 24 սիւների վրայ) (գծ. 1, 6, նկ. 3):

⁴ ՆԱՀԱՊԵՏԵՍԵՆ, Հ. Գ., Քրիստոնէական ճարտարապետութիւն, ո՞ւր է կեղունաձեւ եւ նիստաւոր: Թմբուկները իրենց հերթին բաժանում են 4, 6, 8, 10, 12, 16, 20, 32 նիստերից բաղկացած յամագութիւնները, հետազոտութիւնները, Ս. Ղազար, Վենետիկ 1930, 117:

⁵ Անդ, 333:




Տեկորի տաճարը, 480 - 490




Նկար 4.

Քառակուսի կտրուածք ունեցող բմբուկով գմբեթ:




Ամաղոս Նորավանք, Ս. Կարապետ եկեղեցի, 1221 - 1227




Մուղնու Ս. Գեղրդ եկեղեցի, 1664 - 1669



Գոշավանք, XIII



Հաղպատ, Ս. Նշան եկեղեցի, 976 - 991



Նկար 3.

Գլանաձև (կտրուածքով կլոր) թմբուկներով գմբեթներ:

Վեղարները բաժանւում են կոնաձեւ, նիստաւոր եւ հովհարածեւ տեսակների (այս դէպքում էլ նիստերի քանակները տարբեր են): Բնականաբար փոփոխում են նաեւ թմբուկի վրայ բացուղ լուսամուտների քանակները (4, 8 եւ այլն) (նկ. 1-3):

Հետաքրքրական է, որ կտուց Անապատի (Ժէ. դար) տարբերակում ինքնատիպ լուծումի ենք հանդիպում: Այստեղ ի տարբերութիւն միւս գմբէթների՝ գլանաձեւ թմբուկը վեր է աճում ութանիստի (նկ. 15): Զօրադիրի Ս. էջմիածնի դէպքում (Զ.-է. դարեր) քառանկիւն թմբուկի անկիւնները 90 աստիճանի չեն այլ աղեղնաւոր լծորդուած են 4 անկիւններում (նկ. 6): Իսկ Տեկորի տաճարում (Դ.-Ե.-Զ.) ուղղակի քառանիստ թմբուկի ենք հանդիպում (նկ. 2): Փաստօրէն թմբուկների հիմնական տեսակներ եւ նախատիպեր կարող են բնորոշուել չըջանակային (յատակադժում), ծաւալով գլանաձեւ (Մարմաշէնի, Անիի միջնաբերդի, Բարձրաշէնի, Մակարավանքի, Կեչառիսի եւ այլն), քառակուսի (յատակադժում), եւ ծաւալով քառանիստ (Տեկոր) եւ գլանաձեւից նիստաւորի անցման (կտուց Անապատի) եկեղեցիների թմբուկները:

Առաւել բազմատիպ են բազմանիստ թմբուկները, որոնց մէջ առանձնանում են ութանիստ (Լմբատավանք, Կարմրաւոր, Գյլիանէ, Եղվարդ եւ այլն) (նկ. 4), ութանիստ խորշաւոր (Գառնահովիտ, Մաստարա եւ այլն), տասնվեց նիստանի (Ս. Ճռիկսիմէ, Ս. Մտեփանոս նախավկայ, Գանձասար եւ այլն (նկ. 5), քսան նիստ ունեցող (Մակարավանք) (նկ. 10) եկեղեցիները:

Գմբէթները իրարից առանձնանում են նաեւ ըստ հենման սիւների (կէտերի) քանակի, այսպէս 4 սիւների (նկ. 13), 6 սիւների (Արագած, Աբուղամբենց, Բագարան) 8 սիւների (Ղարսի Առաքելոց, Անիի Ամենափրկիչ, Իրինց) եւ այլն:

Գմբէթների թմբուկները յաճախ ունենում են ըստ նիստերի քանակի սիւնիկներով եւ կամարներով զարդարուած յօրինուածքներ:

Վեղարների ինքնատիպ լուծումներով առանձնանում են Բջնիի եկեղեցին 32 նիստ, Լիմ Անապատի եկեղեցին (նկ. 12) եւ այլն:

Ընդհանրապէս ինքնատիպ են թմբուկ վեղարների ներքին յօրինուածքները, այստեղ գմբէթարդները խաչաձեւ, ճառագայթաձեւ, եռանկիւնաձեւ երկու իրար մէջ ագուցուած հաւասարակողմ եռանկիւնների տեսքով, ինչպէս նաեւ նկարագարդ յօրինուածքներ ունեն (նկ. 14):



Կարմրաւոր, Ս. Աստուածածին, VII




Թովհանսավանք, VI - XIII




Ոսկեպար, Ս. Աստուածածին, VII



Մրէսի տաճարը, 639 - 640



Նկար 4.
Բազմանիստ բմբուկմերով գմբեթներ:




Գանձասար, XIII



Հառիճ, 1201




Ս. Ստեփանոս Նախավկայի վանք, 1643 - 1655



Եղմածին, Ս. Հոգհսիմէ, 618



Ասի, Տիգրան Հոնեաց, 1215



Նկար 5.
Բազմանիստ թմբուկներով գմբեթներ:

Փաստօրէն քրիստոնէական կառոյցի գմբէթը միայն կառուցային լուծում չէ, այն եկեղեցու հետ միասին ընկալում է որպէս «դուռն երկնից ... արդարոյ հանգիստ, մեղաւորաց քաւարան, երևշտակաց թնակարան, Քրիստոսի Արքայարան, սրբոց ժողովարան, տեղի ապահնի, լեռն Տեռն եւ տուն Աստուծոյ»⁶: Այսինքն քրիստոնէական պաշտամունքային կառոյցի յօրինուածքից պահանջւում է, որ այն ցոյց տայ եւ պատկերի նոր հաւատքի սրբութիւնները եւ նրան պէտք է տալ այնպիսի ձեւ, որ նրա ճարտարապետութիւնը բովանդակի «...մի միայն կաքողիկէ եւ Առաքելական Եկեղեցոյ Հաւատամբը, այնպէս, որ պարզամիտներն անգամ, երբ եկեղեցի մտնեն, համոզուին, թէ հեթանոս տեղ մը չէ, այլ իսկապէս Տուն Աստուծոյ»⁷:

Երկնքի նմանութեամբ գմբէթը, այն տիրոյթն է, ուր ամփոփուած են սերովքէները եւ քերովքէները, հին ու նոր սրբերի գումարը, այն երկնային արքայութիւն է: Խոկ երկրի վրայ կառոյցի յատակագծային լուծման տիրոյթում) Աւետարանական Աղքարակն է «...Յորում Քրիստոսի սերմանած բարի ցորենի հետ՝ որմն ալ կը բուսնի: Այդ ազարակին հիմքերը կը կազմեն նահապետներն եւ Մարգարեները իմն Ուխտի, խոկ նոր Ուխտի հիմքը՝ իմքը Քրիստոս է եւ Վեմ գլուխ անկեան, որուն վրայ հիմնուեցան Առաքելներն ու իրենց քարոզութեամբ բարձրացուցին պատերը եւ քարոզեցին Աւետարանն աշխարհ ամենայն»⁸:

Եկեղեցու յօրինուածքի անբաժան մասն են չորս սիւները (մոյթերը), որոնք են «չորս Աւետարանիշները, բարձողք, վեր բռնող Երկնից արքայութիւնը, Եկեղեցոյ միութիւնը, սիւն եւ հաստատոթիւն Եշմարտութեան, զիանն կենաց զոր Քրիստոս Տէրն քարոզեց եւ սորվեցուց»⁹:

Խոկ չորս կամարները «աստուածարանական չորս սիւները (մոյթերը), որոնք են աստուածանիշները, բարձողք, վեր բռնող կողմանը, հաւատք, յոյս, սէր եւ բարեգործութիւն, որ է նոր պատվիրանը «սիրեացես զընկեր քո իրեն զանձն քո» է, որ խարիսխ կը կազմեն Երկնաւոր Թագաւորութեան, խոկ կամարապասկն, որով չորս աղեղները կը միանան՝ կատարեալ սէրն է, որ իրարու հետ կը զօդէ յաղթական եւ զինուորեալ եկեղեցին»: Այս կամարապասկի վրայ է,



6 Նոյն տեղը՝ էջ 338:

7 Նոյն տեղը՝ էջ 339:

8 Նոյն տեղը՝ էջ 343:


9 Նոյն տեղը՝ էջ 343-44:

որ յենտում (հանգչում) է գմբէթը՝ «ուր Քրիստոս քազաւոր ամենակալն, անսահմանն եւ յաւիտենականը կ'իշխէ աստուածութեամբն ու միահեծան իշխանութեամբը»:




Նկար 6.

Քառանիստ, աղեղնաւոր անկիւններով գմբէթ:



Մաստորա, Ս. Յովհաննես
V - VI



Նկար 7.

Քառանիստ, կտրուած անկիւններով գմբէք:




Կարմրաւոր, Ս. Աստուածածին, VII



Լմբատավանք, VI



Թալին, Ս. Աստուածածին, 613-615



Էջմիածին, Ս. Գայիանե, 630



Օշուն, VI


Նկար 8.
Ուրաբիստ քմբուկներով գմբեթներ:



Թանահատ, VIII




Յովիաննավանք, VI - XIII



Նկար 9.

Տասներկու նիստ ունեցող բմբուկով գմբեթներ:




Հաղպատավանք, XIII



Տիգրան Հոնենց, XIII



Մակարավանք, XIII



Նկար 10.
Քսան նիստ ունեցող թմբուկով գմբեթ-ներ


Փաստորէն գմբէթը Աստծոյ երկրային տան (որ յենւում եւ վեր է բարձրանում անդր աշխարհից) երրորդ՝ երկնային մասն է, իր թմբուկ-կլոր, գլանաձեւ, ուղղահայեցաց առանցք, կոնաձեւ վեղար, խնձորակ-զնոպիկ, խաչ, թմբուկին՝ երկրի չորս կողմերի ուղղութեամբ լուսամուտների եւ թմբուկի նիստերի (4, 8, 16 եւ այլն) (գծ. 1-6, նկ. 3) քանակով, ինչպէս նաեւ թմբուկի վրայ տեղադրուած «եռով», որմնատների, զարդամոտիւների, հարթաքանդակների, նրա ներսի ձեւաւորումներով (երկնային դրախտի պատկեր եւ այլն) չորս աւետարանիչների կենդանակերպ պատկերներով եւ այլ յօրինուածքային մանրամասներով:

Հնդկանրապէս Հայկական միջնադարեան պաշտամունքային կառոյցը ժառանգելով միջնչքրիստոնէական աշխարհընկալման, բնաճանաչողական, խորհրդաբանական ընկալումներն ու պատկերացումները այն համալրելով քրիստոնէական հաւատքի ընկալումների հետ իր մէջ խտացնում է նախաստեղծ Հայր եւ Մայր Աստուածութիւնների, երկիր, երկինք, արեւ, յաւերժ, աշխարհի քառակողմ եւ եռաբաժան համակարգերի, բուսական եւ կենդանական ծագութ այլ խորհրդակիր պատկերների (այդ թւում երկրաչափական) Ամենակարող Աստուած եւ Քրիստոս, Սուրբ Երրորդութիւն, երկնային Արքայութեան եւ այլ աշխարհընկալման եւ դաւանաբանական ընկալումներ, մեր առաջ յառնում է որպէս խորհրդանշանային ընկալումների քարեղին տեսք ընդունած յօրինուածքային աւարտուն կառոյց: Այս ամէնն են, որ հիմք են հանդիսացել Միխթարեան միաբանների համար, համարձակ հետեւութիւնների յանձել:

Հայր Գաբրիէլ Նահապետեանն իր ուսումնասիրութեան մէջ վստահօրէն ապացուցում էր, որ Հայկական միջնադարեան պաշտամունքային կառոյցի անբաժանելի մասը կազմող գմբէթը (իր թմբուկ վեղարով), կաթողիկէն զուտ հայկական երեւոյթ է: Գմբէթի ճարտարապետական յօրինուածքի համար, ըստ նրա, հիմք է ծառայել հաւատաւոր Հայի համոզմունքը, առ այն, որ գմբէթը «երկենի նմանութեամբ՝ կ'ամփոփէ սերորդից եւ ֆերորդից դասը, իին եւ նոր սուրբերու գումարը, մասնակից, հաղորդակից լինելու Ս. Սեղանին առջիւ հաւաքուած հաւատացեալներու ալօքքներուն եւ փառանաւորիւններուն, զոր կը մատուցանն Ամենասուրբ Երրորդութեան»:¹⁰ Առաւել նա աւելի քան համոզուած է, որ «... միայն Քրիստոնէական հաւատքի կրօնիքի գաղափարէն է ծներ՝ գմբէթա-

10 Անդ, 343-44:

ւոր եկեղեցիներու կեդրոնական շինութիւնն, զոր կոչելու ենք Հայկական ռե»¹¹:



Արենի, Ս. Աստուածածին 1321թ.

Նկար 11.
Քսանչորս նիստ ունեցող թմբուկով գմբէքներ:




Բջնի, Ս. Աստուածածին, 1031




Վան, Լիմ Անապատ, XVII - XVIII

Նկար 12.
Երեսութերկու հիսութե ունեցող հովհարածն
վեղարով գմբեթներ:



Նկար 13.
Յատակագծում չորս կետի (սիլի, մոյթ, որմնասիւն) վրայ
յնանձ գմբեթներ:




Նկար 14.

Չորս կետի (սիւն, կամար և այլն) վրայ յենած գմբեթներ,
գմբեթարդում՝ խաչեր, հաւասարակողմ, իրար ագուցուած նուանինեմեր,
որմնանկարներ և այլն



Կոտուց Անապատ XVII



Նկար 15.

Գմբէքի քմբուկում գլամաձնից բազմաթիվ անցման օրինակ:

Փաստօրէն գմբէթաւոր պաշտամունքային կառոյցի նախատիպը կարելի է համարել սրահաւոր կառոյցը, յատկապէս եռասրահ (եռանաւ) բազիլիկ տիպը: Գմբէթի գաղափարի ամբողջացումը քրիստոնէական հաւատամքի հիման վրայ իր հենքը արդէն հաստատած ունէր, ի դէմս մինչքրիստոնէական բնապաշտական աշխարհընկալումների: Այստեղ արդէն ձեւաւորուած էին աշխարհի չորս կողմ, արեւածագ արեւամուտ, լոյսի աղբիւր արեգակ, չորս գետ, տարուայ չորս եղանակներ, երկնային տիրոյթ եւ այլ հասկացութիւնները, որոնք իրենց արտացոլումն էին գտել բնակելի երդիկաւոր տան յօրինուածքում (առաստաղ՝ առ-աստղ, սիւն, խոյակ, գլխատուն, հազարաշչն, տան պորտ (թոնիր) եւ այլն):

Միջնադարեան հայ ճարտարապէտական միտքը միացրեց այս հասկացութիւնները, արդիւնքում ստանալով քրիստոնէական տաճարի եւ յատկապէս գմբէթի (թմբուկ, վեղար) յօրինուածքը: Պաշտամունքային կառոյցի յօրինուածքային ձեւերի փնտուտուքի ճանապարհին գտնուեցին թմբուկների մի շարք ձեւեր: Հաւանաբար առաջնային ձեւերից մէկը պիտի համարել չորս սիւնների վրայ քառանիստ ծաւալի աւելացումը, որ պիտի վեր խոյանար սրահաւոր կառոյցից (Տեկորի տաճար): Սա փաստօրէն ամենապարզ ձեւն էր, որ բնականաբար տրամաբանում է չորս (քառակուսի յատակագծում) յենման կէտից կամ կէտերի վրայ ծաւալ գոյացնելու պահանջի դէպքում: Սակայն այս քառանիստ ծաւալի վերին սահմանում ծածկ ունենալու անհրաժեշտութիւնը պիտի ծնէր նոր խնդիրներ: Վերեւի բաց տարածքը կարելի էր ծածկել հարթ, երկթեք (ճակտօնով) եւ քառանիստ ձեւ ունեցող տանիքիներով: Սակայն այս ձեւերը արդէ՞ք կը համապատասխանէին միջնադարեան քրիստոնէական Աստծոյ երկնային տաճարի, դրախտի, անսահմանի, ծմարիտի եւ այլ պատկերացումներին: Անշուշտութիւնը մանաւանդ որ այս ձեւերը արդէն յայտնի էին մինչքրիստոնէական շինարուեստում: Նշանակում է հարկաւոր էր փնտուել նոր լուծումներ: Հաւանաբար նոր լուծման համար երկնակամար, ամպահօվանի, գմբէթ, ինչպէս նաեւ երկիր քառանկիւն եւ երկինք շրջանակ (կամար, ծիածան եւ այլն) հասկացութիւնները եւ դրանց խորհրդանային պատկերացումները իրենց դերը պիտի խաղային: Օրինակ՝ նոյն Տեկորի տաճարում արդէն տեսնում ենք քառանիստից, նրա վերին մասում անցում դէպի շրջանակաձեւ (յատակագծում) անցմանը, որ արդէն յուշում է բազմանիստ ծածկ (վեղար) ունենալու գաղափարը ու դրա իրականացման ֆիզիկական հնարաւորութիւնը: Այս գաղափարը՝ յատակագծային կտրուածքում քառանկիւնից շրջանակի անցման, «իջնում» է թըմ-

բուկի ստորին հասուած եւ արդիւնքում չորս սիւներով (չորս կամարներով) գոյացող քառանկիւնից անմիջապէս հնարաւոր է դառնում անցում կատարել դէպի բազմանկիւն (բազմանիստ թմբուկի գաղափարին) եւ ապա կլոր (գլանաձեւ) թմբուկների, որ իրեն հերթին թելադրում է բուրգաձեւ, կոնաձեւ եւ հովհարաձեւ վեղարներ ունենալը: Միւս կողմից այս լուծումով յստակւում է նաեւ Աստծոյ երկրային տան ծաւալային յօրինուածքում, ըստ քրիստոնէական աշխարհընկալման, մարդ, երկիր, երկինք տիրոյթի շրջանակներում տարանջատել աշխարհի եռաբաժան համակարգը: Արդիւնքում եկեղեցու, տաճարի յօրինուածքը ըստ ուղղահայեց առանցքի, որ անցնում է նրա յատակագծային լուծման երկրաչափական հատուածի եւ գմբէթի կենտրոնով եւ ձգտում է դէպի տիեզերք, տարանջատուում է երեք՝ անդրաշխարհ, Աստծոյ երկրային տուն, Աստծոյ երկնային տիրոյթ սահմանների:

Հետաքրքրական է, որ Կոմիտաս Վարդապետը նոյնպէս ուշադրութիւն է դարձրել գմբէթների յօրինուածքի վրայ, նշելով թմբուկների վրայ եռի տեղը եւ նշանակութիւնը: Ըստ Կոմիտաս Վարդապետի եռը խորհրդանշում է այն սահմանը, որտեղ աւարտում է Աստծոյ երկրային տունը եւ սկսում է Աստծոյ երկնային թագաւորութեան սահմանը: Գլանաձեւ եւ նիստաւոր թմբուկ ունեցող գմբէթների «մրցակցութեան», դրանց խորհրդաբանական նշանակութեան եւ կարեւորութեան մասին է խօսում նաեւ հայ ճարտարապետութիւնում միակը պահպանուած՝ Կտուց Անապատի եկեղեցու գմբէթի յօրինուածքը, որտեղ համադրուած են երկու՝ կլոր եւ բազմանկիւն մօտեցումները:

Այսպէս հայկական միջնադարեան պաշտամունքային կառոյցների գմբէթների յօրինուածքները անցել են ձեւագոյացման բարդ ճանապարհ, ինչը յենուած է հայկական մինչքրիստոնէական եւ քրիստոնէական շրջանների աշխարհընկալումների եւ բնաճանաչողութեան վրայ, ինչի մասին վստահօրէն խօսել, քննարկել եւ համապատասխան եղբայրանգումներ են կատարել Միիթարեան միաբաններ՝ Հ. Ղեւոնդ Ալիշանն եւ Հ. Գաբրիէլ Նահապետեանը:

Վենետիկի Միիթարեան միաբանների (տպագիր եւ անտիպ) ուսումնասիրութիւնների բազմակողմանի եւ հետազոտական աշխատութիւնները կ'օգնեն նորովի մեկնաբանել հայ ճարտարապետութեան յօրինուածքային նախատիպերի եւ տիպերի ձեւագոյացման ուղին:

Summary

INTERPRETATIONS OF ARMENIAN RELIGIOUS BUILDING TYPES ACCORDING TO MONKS OF THE MECHITARIST CONGREGATION OF VENICE

ASHOT HAYKAZUN GRIGORYAN

This article confirms Father Gabriel V. Nahapetyan's view that the dome we find in Armenian religious buildings, with its drum and hood, is a purely Armenian phenomenon. The article also highlights the important role of the monks of the Mechitarist Congregation of the island St. Lazarus in the studies of Armenian history, Armenian culture, and, in particular, architecture.